Հավելված N 4
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 21-ի N 595 - Ն որոշման

ՊԱՅՄԱՆՆԵՐ
ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Այլ կազմակերպություններին (բացառությամբ՝ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների) (այսուհետ՝ կազմակերպություն) պետական սեփականություն հանդիսացող գույքն (այսուհետ՝ գույք) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է, եթե կազմակերպության կողմից ներկայացվել է՝

1) N 4 օրինակելի ձևի պահանջները բավարարող գույքի բարելավմանն ուղղված ներդրումային ծրագիր, որը պարունակում է առաջարկվող ներդրումները ներառյալ՝ ըստ արժեքների գույքի բարելավմանն ուղղված շինմոնտաժային աշխատանքների և այլ ծախսերի իրականացումը, ինչպես նաև մեքենասարքավորումների, տեխնիկայի և այլ գույքի ձեռքբերումը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունում ներդրումների ներգրավելու նպատակով գույքն (բացառությամբ՝ ապաստարանների, հակաճառագայթային թաքստոցների) անհատույց օգտագործման տրամադրման դեպքում, հնարավոր օգտագործողների կողմից առաջարկվող ներդրումային ծրագրերի ներկայացվող նվազագույն պահանջներն են (բացառությամբ՝ մարզերի սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող գույքի, որոնց հնարավոր օգտագործողներին առաջարկվող ներդրումային ծրագրերի ներկայացվող ներդրումների արժեքների նկատմամբ կիրառվում են 50 տոկոսի չափով զեղչ)՝

ա. մինչև 25 մլն դրամ գնահատված արժեքով գույքի համար՝ առնվազն գույքի գնահատված արժեքի չափով ներդրում և աշխատատեղի ստեղծում.

բ. 25-50 մլն դրամ գնահատված արժեքով գույքի համար՝ յուրաքանչյուր 1 մլն դրամ գնահատված արժեքի դիմաց 1,25 մլն դրամի ներդրում և աշխատատեղի ստեղծում.

գ. 50-75 մլն դրամ գնահատված արժեքով գույքի համար՝ յուրաքանչյուր 1 մլն դրամ գնահատված արժեքի դիմաց 1,5 մլն դրամի ներդրում և աշխատատեղի ստեղծում.

դ. 75 մլն դրամից ավել գնահատված արժեքով գույքի համար՝ յուրաքանչյուր 1 մլն դրամ գնահատված արժեքի դիմաց 2 մլն դրամի ներդրում և աշխատատեղի ստեղծում.

Ընդ որում «ա», «բ», «գ» և «դ» պարբերություններում նշված ներդրումների ընդհանուր ծավալում գույքի բարելավմանն ուղղված միջոցները պետք է կազմեն ընդհանուրի մեջ առնվազն 80 տոկոս.

2) կազմակերպության կողմից առաջարկվող գույքի բարելավման ներդրումային ծրագիրը բավարարում է կազմակերպության զարգացման ծրագրին (առկայության դեպքում) և համապատասխան ոլորտներում զարգացման ռազմավարական փաստաթղթերի պահանջներին:

2. Պայմանագրային պարտավորությունների կատարման հսկողությունն իրականացվում է ծրագրին համապատասխան գույքի բարելավմանն ուղղված ներդրումների նախատեսված ծավալի և ստեղծվող աշխատատեղերի քանակի նկատմամբ:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ N 4

ԾՐԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

1.Ընդհանուր տեղեկություններ պետական սեփականություն հանդիսացող գույքի (այսուհետ՝ տարածք) բարելավման ծրագիր իրականացնող կազմակերպության մասին

1.1. կազմակերպության լրիվ անվանումը _____,

1.2. կազմակերպության ձևը _____,

1.3. կազմակերպության ստեղծման (վերակազմակերպման) ժամկետը _____,

1.4. կազմակերպության գրանցման վկայականի համարը _____,

1.5. գրանցման վայրը և տարեթիվը _____,

1.6. գործունեության իրականացման վայրը (նստավայրը)_____,

1.7. փոստային հասցեն_____,

1.8. կազմակերպության կանոնադրական կապիտալի չափը (առկայության դեպքում)

_____ դրամ,
(թվերով և տառերով)

1.9. նույնականացման ծածկագիրը _____, հարկ վճարողի հաշվառման համարը _____,

1.10. տարածքի բարելավման ներդրումային ծրագիրը հաստատվել է _____ կազմակերպության իրավասու մարմնի _____ որոշմամբ

Գործադիր տնօրեն՝_____, հեռ._____,

Հաշվապահական ծառայության ղեկավար _____, հեռ. _____,

1.11. այլ տվյալներ (հեռախոս/ֆաքս, էլեկտրոնային հասցե, վեբ կայքեր) _____ :
(առկայության դեպքում)

2. Կազմակերպության գործունեության նպատակները և խնդիրները

2.1. կազմակերպության նպատակներն են՝

1) _____,

2) _____,

3) _____ և այլն,

2.2 կազմակերպության խնդիրներն են՝

1) _____,

2) _____,

3) _____ և այլն:

3. Կազմակերպության կողմից ներկայացվող տարածքի անբաժանելի բարելավման ներդրումային ծրագիրը

3.1. ներդրումային ծրագրի ընդհանուր նկարագիրը_____

_____,

3.2. ծրագրի հիմնական նպատակը և լուծման ենթակա խնդիրները

_____

_____,

3.3. ներդրումային ծրագիրն իրականացվում է _____

_____

(անմիջականորեն կազմակերպության կողմից)

_____:

(կամ կապալային կամ այլ պայմանագիր կնքելու միջոցով)

4. Ներդրումային ծրագրի գործողության ոլորտը, ներդրումային բյուջեն և իրականացման ժամանակահատվածը

4.1 սույն ծրագիրն իրականացվում է հետևյալ ոլորտ(ներ)ում

1) _____,

(ծառայությունների մատուցում՝ տուրիզմ, հյուրանոցային բիզնես, սննդի կազմակերպում, գրասենյակային տարածքների տրամադրում և այլն)

2)_____,

(կամ ուղղակի արտադրական ծրագրի իրականացում)

3)_____.

(կամ գիտաարտադրական և մշակույթային ծրագրի իրականացում):

4.2 սույն ներդրումային ծրագրի բյուջեն կազմում է _____դրամ,

(թվերով և տառերով)

4.3 սույն ներդրումային ծրագրի իրականացման համար նախատեսված _____ ժամկետում ներդրողը ըստ տարիների նախատեսում է կատարել հետևյալ գումարի ներդրումները

1) _____,

2) _____,

3) _____ և այլն,

5. Ներդրումային ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

1) սեփական միջոցներ _____,
(նշել գումարի մեծությունը)

2) փոխառու միջոցներ _____,
(նշել գումարի մեծությունը)

3) դրամաշնորհներ _____,
(նշել գումարի մեծությունը)

4) բարեգործների կողմից տրամադրվող միջոցները _____,
(նշել գումարի մեծությունը)

6. Ներդրումային ծրագրով նախատեսված ֆինանսավորման ուղղությունները և ըստ ժամանակացույցի իրականացվող միջոցառումները

6.1. սույն ծրագրի շրջանակներում նախատեսված ֆինանսավորման ուղղություններն են

1) տարածքի բարելավմանն ուղղված _____,
(շինմոնտաժային աշխատանքների իրականացում, նշել գումարը)

2)_____,
(մեքենասարքավորումների, տեխնիկայի և այլ գույքի ձեռքբերում, նշել գումարը)

3) տարածքի բարելավմանն ուղղված_____,
(այլ ծախսերի կատարում, նշել գումարը)

Տարածքի բարելավման ակնկալվող ներդրումներին վերաբերվում են միայն տարածքի վրա կատարվող և անբաժանելի բարելավում ապահովող միջոցները, որոնք էլ հիմք են հանդիսանում ներդրումային պարտավորությունների կատարումը հաստատելու համար:

6.2. սույն ծրագրի շրջանակներում կազմակերպությունը ըստ ժամանակացույցի նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները

1)_____,
(նշել միջոցառումը և կատարման ժամկետը)

2)_____,

(նշել միջոցառումը և կատարման ժամկետը)

3) _____ և այլն:

(նշել միջոցառումը և կատարման ժամկետը)

7. Ներդրումային ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Սույն ծրագրի իրականացման արդյունքում տարածքի բարելավման քանակական և որակական հստակ չափելի ցուցանիշների սահմանում, տարածքի բարոյական մաշվածության նվազման ուղղությամբ աշխատանքների արդյունքների առանձնացում և ներկայացում և այլ տարածքի բարելավումը բնութագրող ու աշխատատեղերի ստեղծմանն առնչվող տեղեկությունների ներկայացում:

8. Ներդրումային ծրագրի իրականացման հետ կապված ռիսկերը

8.1. սույն ներդրումային ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերն են

1) _____,

2) _____,

3) _____ և այլն,

8.2 հնարավոր ռիսկերի մեղմացման նպատակով իրականացվող միջոցառումներն են

1) _____,

2) _____,

3) _____ և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

25.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ